10.56737/2953-7843-2023.09-45

ԱՎԵՏԻՍ ՔԱԼԱՇՅԱՆ
Փիլիսոփայական գիտ. թեկնածու, դոցենտ

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սկիզբը՝ թիվ Թ.

Վեհափառ Հայրապետն անընդհատ հիշեցնում է նաեւ, որ կրթական հաստատություններում ձեռք բերված գիտելիքը սոսկ պարզ քանակ չէ, այլ յուրացված արժեքների լիակատար ըմբռնումն է ու հմուտ կիրառումը։ Ուսման ընթացքում գիտական, մշակութային ու հոգեւոր ժառանգության յուրացումը մեր հասարակության արժեքավոր ձեռքբերումներից է նաեւ այն պատճառով, մատնանշում է նա, որ «մեր երկրի զարգացումը, մեր երազած հայրենիքի կառուցումը հնարավոր է միայն ուսյալ, կրթված սերունդների շնորհիվ, որոնք առ Աստված ապավինությամբ պիտի շարունակեն մեր ժողովրդի կյանքը հարստացնել ու բարեզարդել՝ իրենց հոգու ու մտքի արարումներով, իրենց ստեղծած գիտական, հոգեւոր ու մշակութային արժեքներով»[1]։ Այդ ամենը խիստ անհրաժեշտ է մեկ այլ դիտանկյունից եւս, հավելում է Հայոց Կաթողիկոսը, քանի որ «....21-րդ դարում կրթության դերն առավել ու առավել է կարեւորվում ողջ աշխարհում։ Բոլոր ոլորտներում՝ տնտեսություն, արդյունաբերություն, առողջապահություն եւ այլն, տեղի են ունենում մեծ փոփոխություններ, որոնք նոր հարթության վրա են դնում մարդկային կյանքը, բացում զարգացման ընդարձակ հորիզոններ։ Մենք բոլորս գիտակցում ենք, որ ոչ մեծ հնարավորություններ ունեցող եւ մարտահրավերներ դիմագրավող մեր երկրում առաջնային է գիտության զարգացումը՝ որպես մեր պայծառ ապագայի երաշխիք։ Արդ, նախանձախնդիր կերպով պետք է շարունակենք մշտապես նորովի արդյունավորել կրթության ոլորտում ներդրվող բոլոր ջանքերը, որ մեր երիտասարդներն իրենց իմացության

[1] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը կրթության մշակների օրհնության արարողությանը, «Քրիստոնյա Հայաստան», 2018, սեպտեմբեր Ա., թիվ 17 (517), էջ 1։*

պաշարով մրցունակ լինեն ողջ աշխարհում եւ շենացնեն մեր կյանքը, զորացնեն մեր երկիրը, բարին ու բարիք ստեղծեն՝ հետապնդելով մեր ազգային իղձերի ու երազների իրականացումը»[2]։

Կրթության համակարգի ներկայացուցիչներին հղելով իր հայրապետական օրհնությունը, մաղթելով բեղուն ու արգասավոր արդյունք՝ Գարեգին Բ. Կաթողիկոսը հիշեցնում է, որ «ուսման ու կրթության մեջ ձեռքբերումները լավագույն հաղթանակներն են մեր երկրի ու ժողովրդի ճանապարհին դեպի բարգավաճ ու բարօր կյանք, դեպի մեր բոլոր իղձերի իրականացում»[3]։ Այդ համատեքստում Վեհափառի ջանքերն ու գործունեությունը մեծ արժեք են ներկայացնում նաեւ այն դիտանկյունից, որ հայորդիների կրթության նկատմամբ նրա՝ հետեւողականորեն ծավալած «ոգու շինարարության» ընթացքն անխզելիորեն շաղկապվում է հայրենասիրության եւ եկեղեցասիրության պահանջների հետ։ Այդ փաստի վկայությունը «սիրասուն սաներին եւ կրթության բնագավառի սիրելի նվիրյալներին» ուղղված՝ Վեհափառի մաղթանքն է. «....հոգով ու մտքով զորացած անցնեք դեպի իմացության լույս առաջնորդող ձեր միասնական ճանապարհը, եւ թող Բարձրյալ Տերն օրհնի ձեր ջանքերն ու բարի ընթացքը՝ հանուն մեր հայրենիքի վաղվա նոր օրվա եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հավետ շինության ու պայծառության»[4]։

Արդի պայմաններում կրթության եւ գիտելիքներ ձեռք բերելու անհրաժեշտությունը Գարեգին Բ. Կաթողիկոսն անխուսափելի եւ միանգամայն օրինաչափ է համարում այլ տեսանկյունից եւս։ Այդ կապակցությամբ նրա ընդհանրացնող արժեքային մոտեցումները հասցեագրվում են բոլոր սովորողներին եւ երիտասարդներին։ Ինքնին հասկանալի է, որ նման մոտեցումներն անխուսափելի ենթադրում են արդի պայմանների խորազնին քննություն եւ արհեստավարժություն։ Բազմամյա փորձառության հիման վրա Վեհափառը առ Աստված աղոթքով մաղթում է, որ Տերը «լուսավոր պահի մեր կրթօջախները, օրհնի մանկավարժների աշխատանքը՝ կրթելու մեր ժողովրդի արժանավոր զավակներ, եւ նրանց ուժ ու եռանդ պարգեւի իրենց նվիրական առաքելության

---

[2] *Մայր Աթոռ Ս.Էջմիածնում կատարվեց կրթության մշակների օրհնության կարգ, «Քրիստոնյա Հայաստան», 2018, սեպտեմբեր Ա., թիվ 17 (517), էջ 3։*

[3] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը նոր ուսումնական տարվա առիթով, «Էջմիածին», 2006, Թ., էջ 34։*

[4] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ.Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը նոր ուսումնական տարվա առիթով, «Էջմիածին», 2003, Թ., էջ 15։*

մեջ»։ Իսկ սաներին դիմելով՝ մաղթում է, որ նրանք զորանան «ջանասիրությամբ, քաջարթուն մտքով ու հոգով եւ ձեր [իրենց] ուսուցիչների առաջնորդությամբ ու միասնական ջանքերով ուսումնական տարին առատ դարձրեք [դարձնեն] արդյունքներով, որոնք պիտի լուսավորեն ձեզանից [նրանցից] յուրաքանչյուրի եւ մեր ողջ ժողովրդի ճանապարհը եւ ծառայեն աստվածապարգեւ մեր հայրենիքի զորացմանն ու առաջընթացին»[5]։

Փաստերի համադրությունը թույլ է տալիս անդրադառնալ կրթության նկատմամբ Գարեգին Բ. Հայրապետի ընդհանրական մեկ այլ մոտեցմանը եւս, այն է՝ ազգապահպանության գործում կրթության եւ գիտելիքի դերին ու նշանակությանը։ *Այդ կապակցությամբ նա կրթության ոլորտի հայ երիտասարդներին ուսուցանում է. «Բարիք է ուսումը, գիտելիքն ու կրթությունը եւ գովելի առաքինություն՝ այն մարդկանց, կյանքին ու առաջընթացին ծառայեցնելը։ Մեր ժողովրդի դժվարին պատմության դարավոր փորձությունների մեջ գիրն ու դպրությունը եղել են նաեւ փրկության ուղի՝ հայ եւ քրիստոնյա մնալու, ապրելու եւ վերածնվելու։ ....Սուրբ Սահակ եւ Սուրբ Մաշտոց մեր մեծ Ուսուցչապետերի գործին եւ անմահ ավանդին հավատարիմ՝ զորացյալ եղեք առ Աստված հավատով, սիրով՝ հանդեպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ու հայրենիքը»*[6]։ *Հայոց Նվիրապետն անդրադառնում եւ մեծապես գնահատում է նաեւ կրթության ու դաստիարակության համակարգային եւ շարունակական բնույթը։ Այդ կապակցությամբ դիմելով կրթության ոլորտի երիտասարդ հայորդիներին՝ նա գրում է. «Սիրելի՛ զավակներ, ուսումնասեր ու ջանադիր եղեք ուսման մեջ, ուշադիր ու պարտաճանաչ ձեր պարտականությունների հանդեպ, քանզի կրթությունը ձեզ համար լուսավոր եւ օրհնյալ պատվար է լինելու ողջ կյանքում։ Սուրբ Գիրքն ուսուցանում է. «Մի՛ թող իմաստությունը, եւ նա կպաշտպանի քեզ, սիրիր այն, եւ նա կպահպանի քեզ» (Առակաց Դ. 6)։ Իրապես՝ կրթության մեջ ձեր ձեռքբերումներով է, որ պիտի արգասիքներ բերեք ձեր կյանքին եւ ծառայեք*

---

[5] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Գիտելիքի, գրի եւ դպրության օրվա առիթով, «Քրիստոնյա Հայաստան», 2022, սեպտեմբեր Ա., թիվ 17 (613), էջ 1։*

[6] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական մաղթանքը նոր ուսումնական տարվա առիթով, «Էջմիածին», 2005, Թ., էջ 13։*

մեր հայրենիքին ու ժողովրդին»[7]։ Միաժամանակ Վեհափառը վկայակոչում է նաեւ ուսման, կրթության եւ գիտելիքի նկատմամբ Հայ Եկեղեցու դարերով սրբագործված ավանդությունը եւ կարեւորելով կրթության շարունակական բնույթը՝ հորդորում է ընթանալ ավանդությամբ սրբագործված այդ ճանապարհով, քանզի, մատնանշում է նա, «....գիտության եւ կրթության լույսով պիտի կերտենք մեր երկրի եւ ազգի նոր կյանքը եւ առաջընթացը։ Երիտասարդ սերնդի ազգային ոգով կրթությունը եւ հայրենի սրբազան արժեքներով դաստիարակությունն է գրավականը մեր ժողովրդի գոյության հարատեւության»[8]։

Հայազգի դպրոցականների եւ ուսանողների համար կարեւոր ուղեցույց է Վեհափառ Հայրապետի՝ շարունակաբար ուղղորդող կոչը՝ շարունակել հայոց պատմամշակութային ավանդությունը։ *Այդ մոտեցման դերը կաթողիկոսը բացատրում է նրանով, որ «....հայ մշակույթը, որ սնվել է Ավետարանից, Քրիստոսի լույս պատվիրաններից ու պատգամներից, միաժամանակ դառնում է սնուցիչ հայ հավատավոր հոգու համար, դառնում է ակունք, աղբյուր հայորդու պապակ հոգու համար՝ վերստին հոգեւորով զորացնելու իր անձը, հոգեւորով ամրացնելու իր հոգին։ Մենք գիտենք, որ մեր ժողովուրդը դարերի հոլովույթում բոլոր փորձությունների եւ դժվարությունների մեջ կարողացել է ապահովել իր գոյությունը շնորհիվ իր հավատքի ու հոգեւոր իր արժեքների, արարելու եւ ստեղծագործելու իր կամքի ու ներուժի»[9]։ Անկողմնակալ իրողությունների ընդհանրացված վերլուծությամբ Վեհափառը նաեւ ի ցույց է դնում, որ պատմականորեն հոգեւոր ավանդության անբաժան ուղեկիցն է եղել «լուսաւորութեան ուժի նկատմամբ հաւատը»,* եւ հավաստում է, որ այդ ճանապարհով են գիրը եւ գրասիրությունը դարձել մեր ժողովրդի էությունը բնորոշող առանձնահատկությունները։ *Այդ դիրքորոշումը նա հիմնավորում է այն իրողությամբ, որ գրասիրության նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունքի դրսեւորման արդյունքում է, որ «գիրքը մեր հաւատի անբաժան մասն է, անբաժան մասն է առ Հայրենին մեր նուիրումի*

---

[7] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական մաղթանքը նոր ուսումնական տարվա առիթով, «Էջմիածին», 2011, Թ., էջ 3։*

[8] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական մաղթանքը նոր ուսումնական տարվա առիթով, «Էջմիածին», 2007, Թ., էջ 17։*

[9] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը «Ս. Սահակ – Ս. Մեսրոպ» շքանշան հանձնեց Ալբերտ Սեւինչին, «Էջմիածին», 2004, Թ.–Ժ., էջ 29։*

ու սիրոյ, ճանաչողութեան ու արարումի ոգու, որը Աւետարանի լոյսով բացուեց ու փթթեց ու պտուղներ տուեց անմահ»[10]։

Այդ իրողության մեկ այլ վկայությունն այն է, հավաստում է Վեհափառը, որ հայ կրթյալ սերունդները «....դարեր-դարեր անխոնջ գրեցին, մատեաններ ու յիշատակարաններ ծաղկեցին, ու գիրքը դարձաւ սրբութիւն, լոյս ու ճանապարհ ....հաւատալով հայախօս ու աղօթաշունչ այդ գրքերի լուսաբեր, ազգապահպան ու ազգաշէն առաքելութեանը, հաւատալով լուսաւորութեան ուժին, մարդկութեան առաջագնաց, խաղաղ գալիքին։ Այս հաւատով փորձութիւնների, աւերների ու կոտորածների ժամանակ նախեւառաջ գրքերը փրկեցին, պահպանեցին գաղթի ճանապարհներին, օտարութեան մէջ, պահպանեցին ինչպէս սուրբ նշխար»[11]։ Ահա թե ինչու այդ փաստերի ընդհանրացմամբ Վեհափառը կրթական ոլորտի հայ երիտասարդ սերնդին անհոգնաբեկ սովորեցնում է, որ մեր հայրենիքի բարօր կյանքի երաշխիքը լուսավորված, կրթված, Քրիստոսի սիրով, Ավետարանի նվիրական պատվիրաններով հասակ առած եւ հոգի ու գիտակցություն կերտած զավակներն են։ Դրա հիման վրա է խարսխված նաեւ Հայրապետի մաղթանքը, որ մեր ժողովրդի կյանքն անշեղորեն առաջնորդվի այն ճանապարհով, որով դարեր շարունակ քաջ ու խիզախ անցել են մեր նախորդ սերունդները՝ հաղթահարելով ամեն փորձություն ու կյանքի դառնություն, եւ կերտել են լուսավոր օրը մեր ժողովրդի[12]։

Ավելի քան ակնհայտ է, որ որակական, իմաստային տեսանկյունից Գարեգին Բ. Կաթողիկոսի մոտեցումներն օրինակելի եւ ուսանելի են ինչպես կրթության համակարգի նկարագրության, այնպես էլ այդ ոլորտում գիտա-տեսականի եւ հոգեւոր-բարոյականի, ինչպես նաեւ՝ աշխարհիկի եւ հոգեւորի համադրության դիտանկյունից։ Ընդհանրականն այստեղ այն է, որ դպրոցական եւ ուսանող երիտասարդների նկատմամբ Հայոց Վեհափառի արժեքային մոտեցումներում հիմնավորվում է գիտելիքի, լուսավորության եւ հավատի արդյունավետ համագործակցության տեսակետը։ *Այլ կերպ ասած՝ այդ հոլովույթում ակնհայտ է ինչպես պատմա-եկե-*

---

[10] Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակը «Մատենադարանի բարեկամներ» հիմնադրամի հիմնման առիթով, «Էջմիածին», 2004, Թ.–Ժ., էջ 10։

[11] Անդ։

[12] Տե՛ս Կրթության մշակների օրհնություն Մայր Աթոռ Ս.Էջմիածնում, «Էջմիածին», 2013, Ը., էջ 153։

ղեցական ավանդական ըմբռնումների, այնպես էլ համապատասխան մասնագիտական մոտեցումների նրբին համադրության փաստը։ Հայոց Հայրապետը նկատում է նաեւ, որ կրթությունն ամենեւին էլ գիտելիքների քանակ չէ, այլ գիտելիքների ամբողջության ըմբռնումն է ու գործառնական կիրառումը։ Կրթությունը, գիտելիքների ձեռքբերումը, հավաստում է նա, այն խարիսխն է, որի հիման վրա պետք է կառուցվի Հայաստանին եւ Հայ Եկեղեցուն գիտակցաբար ու անդավաճան նվիրվածությամբ ծառայելու գաղափարը։ Ահա թե ինչու այդ կապակցությամբ Գարեգին Բ. Կաթողիկոսը մատնանշում է. «Մեր հայցն ու աղոթքն են առ Բարձրյալ Տերը, որ աստվածային երկնառաք Իր օրհնությամբ ....մեր զավակները ջանադրությամբ ամեն ժամ բազմապատկեն իրենց գիտելիքները, որպեսզի իմացությամբ զորացած կարողանան լավագույնս ծառայել մեր հայրենիքին եւ Սուրբ Եկեղեցուն»[13]։

Այդ ամենը թույլ է տալիս միանգամայն հիմնավոր համարել այն դիտողությունը, թե «Երեխաները մեր ապագան են» իմաստությունը, որ առ այսօր էլ շատերի համար լոկ հավուր պատշաճի ասվող խոսքեր են, Նորին Սրբության համար դարձավ կարեւորագույն գործ, դարձավ ապագային միտված հրամայական»[14] *(ընդգծումը մերն է.— Ա. Ք.)։ Այդ իրողությունը մեկ անգամ եւս կարելի է փաստել ավանդական դարձած՝ շրջանավարտների օրհնության օրվա առիթով Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձների օրինակով։*

Դպրոցական ուսումնառությունն ավարտելու կապակցությամբ հայրապետական օրհնությամբ եւ ջերմ շնորհավորանքներով դիմելով շրջանավարտներին՝ Գարեգին Բ. Կաթողիկոսը նկատում է. «Բերկրանքով ու խինդով եք լեցուն այսօր բոլորդ, գեղեցկատես՝ ձեր հույսերով ու լավատեսությամբ, ամբարած արդյունքները նվիրյալ այն ջանքերի ու սիրո, որ ներդրել են ձեր սիրելի ուսուցիչները՝ տասը տարի ուսուցանելով ու կրթելով, դեպի հիշարժան այս օրն առաջնորդելով ձեզ։ Նրանց շնորհակալ գործը մշտապես ձեր ուղեկիցն է լինելու, ինչպես եւ հարազատ դպրոցի կարոտը, որ, վստահաբար, արդեն իսկ անթեղում եք երիտա-

---

[13] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Գիտելիքի օրվա առիթով, «Քրիստոնյա Հայաստան», 2013, սեպտեմբեր Ա., թիվ 17 (397), էջ 1։*

[14] Աստղիկ Ստամբոլցյան, *Հավատն է մեր ծառայության՝ մեր զինվորության գլխավոր զենքը...., «Քրիստոնյա Հայաստան», Բացառիկ. նվիրված Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի գահակալության 20 եւ ծննդյան 70-ամյակին, 2021, էջ 8։*

սարդական ավյունով խայտացող ձեր հոգիներում։ Մարդկային կյանքի առաջին կարոտներից է դպրոցի հանդեպ կարոտը, որը, թանկ մանկության ու պատանեկության հուշերով, ընտանիքի, հարազատ բակի ու ծննդավայրի ջերմության հետ անբաժան մասն է դառնում առ հայրենին մեր ունեցած մեծ սիրո»[15]։ Հայոց Հայրապետը շրջանավարտներին ավանդում է է, որ ապագայում ինչպիսի գործունեությամբ էլ զբաղվեն, նրանց ուղին լուսավորյալ ու անխոտոր լինի, առաջնորդվեն անկախ մեր հայրենիքի շենացման ու բարգավաճման, առաջընթացի ու զարգացման, ինչպես նաեւ հայ ժողովրդի բարօր կյանքի հաստատման գաղափարները կյանքի կոչելու նվիրական ուղիով։ Նա շրջանավարտներին հիշեցնում է. «Կեղծիքից, ստրկամտությունից, անգիտությունից ազատ ձեր հոգու սլացքներով է կերտվելու նվիրական մեր հայրենիքի այսօրն ու գալիքը։ Դուք թանկարժեք, ոսկեղեն հունձքն եք մեր, որ խտացրած ազատության մեր արեգակի հորդավառ լույսը, հայության նվիրական իղձերի կենսավորումով պտղավորելու եք ազգային մեր կյանքը»[16]։

Շրջանավարտներին Գարեգին Բ. Կաթողիկոսը հորդորում է նաեւ՝ հանուն հայրենիքի վաղվա լուսավոր օրվա համատեղել ջանքերը՝ մշտապես հիշելով անանց այն ճշմարտությունը, որ «աստվածպարգեւ է հայրենիքը, երկնաշնորհ»[17]։ Հիմնահարցի քննարկմանն անդրադառնալով տարբեր տեսանկյուններից՝ Հայոց Նվիրապետը շրջանավարտներին նաեւ ուսուցանում է. «Երջանիկ եք դուք, սիրելի՛ շրջանավարտներ, որ հասակ եք առել անկախ Հայաստանում, սնուցվել ազատության շնչով, հավատի եւ հայրենյաց ավանդների վերարժեւորմամբ։ Պատմությունից ձեզ հայտնի է, թե որքան կարեւորել են մեր նախնիք մեր երկրի ազատությունն ու անկախությանը, որքան արյուն հեղել, ջանք թափել՝ կորցնելուց հետո այն վերագտնելու համար։ Այո՛, հոգսաշատ են այսօր մեր հայրենիքն ու ժողովուրդը, սակայն ազատությունն է այն արժեքը, որ պայման է դառնում արարումների, բարգավաճման ու բարօրության»[18] *(ընդգ-*

---

[15] *Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը շրջանավարտներին, «Էջմիածին», 2000, Ե., էջ 41։*

[16] *Անդ։*

[17] *Անդ։*

[18] *Անդ։ Մեկ անգամ եւս մատնանշելով հայրենասիրության անպայմանավոր բնույթը՝ Հայոց Կաթողիկոսը հավաստում է նաեւ, որ «Ամենքիս առաքելությունն է կերտել ազնիվ, հայրենասեր ու հավատավոր նկարագիրը մեր զավակների, զորացնել նրանց մեջ պատասխանատվությունն ապագայի նկատմամբ եւ ամրապնդել Աստծու կողմից*

ծումը մերն է.— Ա. Ք.)։ Եւ այդ ամենի քննական արժեւորմամբ շրջանավարտ «թանկագին ոսկե հունձքին» մեկ անգամ եւս հավաստում է, որ մեծ է մեր ժողովրդի սպասելիքները նրանցից. «Այսօր դուք կյանքի նոր հանգրվանի սեմին եք, եւ ձեզ հետ են կապված հույսերը ձեր ծնողների, մեր ժողովրդի, մեր հայրենիքի։ Անշե՛ջ պահեք ձեզ փոխանցված գիտության լույսը եւ ավելի զորացրե՛ք ձեր գիտելիքները կրթության նոր ասպարեզներում մնայուն ձեռքբերումներով եւ համամարդկային ու ազգային արժեքների առավել ճանաչողությամբ»[19]։

Ընդհանրական այդ դիրքերից իր արժեքային մոտեցումներով Ամենայն Հայոց Կաթողիկոսը վստահություն է ներշնչում շրջանավարտներին, նրանց հորդորում է՛լ ավելի կատարելագործել կրթության ընթացքում ձեռք բերված անհատական որակները եւ հոգեւոր նկարագրության հետագա առաջընթացը, կոչում է ստեղծարար աշխատանքի։ Ահա թե ինչու հայրական հորդորով դիմելով շրջանավարտներին՝ նա կոչ է անում. «Վստահ քայլեք ձեր ճանապարհով, կրեք ձեր կարեւորության գիտակցությունը, շիտակ, աներկբա ու անվախ ստանձնեք ձեր բաժին պատասխանատվությունը։ Ձեր ջանադիր, անխոնջ, ստեղծարար աշխատանքով, ձեր հոգու ջերմությամբ ու ձեռաց գործերով իմաստավորեք ու գեղեցկացրեք ձեր ու ձեր հարազատների, մեր ժողովրդի կյանքը, մեր մայր հողն ու երկիրը։ Հավատարմությամբ ծառայեք մեր հայրերի Աստծուն, զորացեք հավատքով, հինավուրց մեր պատմությամբ ու մշակույթով, աղոթախոս անցեք կյանքի ձեր ուղին»[20]։

Հայոց Նվիրապետը միաժամանակ անդրադառնում է այն հարցին, որ դպրոցական ուսումնառության ընթացքում գիտելիքներ եւ արժեքներ յուրացնելով՝ ոչ միայն էապես զարգացել է կյանքի նոր ճանապար-

---

տրված շնորհները բազմապատկելու եւ ի շահ մեր երկրի եւ ժողովրդի գործադրելու հանձնառությունը», Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Գիտելիքի օրվա առիթով, «Քրիստոնյա Հայաստան», 2015, սեպտեմբեր Ա., թիվ 17 (445), էջ 1։

[19] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը շրջանավարտների օրհնության օրվա առիթով, «Էջմիածին», 2008, Ե., էջ 39։ Հանուն այդ նպատակների իրագործման՝ Վեհափառ Հայրապետը նաեւ հավատում է. «Աղոթում ենք առ Ամենակարողն Աստված, որ պահի ու պահպանի Ձեզ Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո եւ պարգեւի երջանկություն, երկնառաք հաջողություններ, որպեսզի հաստատուն ու նախաձեռնող ոգով ընթանաք կյանքի ճանապարհով՝ միշտ հավատարիմ մնալով մեր Մայր հայրենիքին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն», անդ։*

[20] *Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը շրջանավարտներին, «Էջմիածին», 2000, Ե., էջ 41։*

հին կանգնած երիտասարդ սերնդի գիտակցությունը, այլեւ ընդարձակվել է աշխարհընկալումը։ Եւ քանի որ շրջանավարտները «նոր կյանքի շեմին կանգնած են նոր երազներով ու ձգտումներով», Վեհափառը նրանց հորդորում է «առավել ընդարձակել իմացությունն ու աշխարհայացքը»։ Այդ նպատակի իրականացման համար Հայոց Նվիրապետը շրջանավարտների հայացքն ուղղում է դեպի ապագան, նրանց վստահություն է ներշնչում եւ հորդորում. «Ուսումնառության տարիներին բարեջան ձեր ուսուցիչներից դուք ստացաք գիտելիքներ՝ քայլելով իմացության արահետներով։ Այսօր դուք կյանքի նոր հանգրվանի սեմին եք, եւ ձեզ հետ են կապված հույսերը ձեր ծնողների, մեր ժողովրդի, մեր հայրենիքի։ Անշե՛ջ պահեք ձեզ փոխանցված գիտության լույսը եւ ավելի զորացրե՛ք ձեր գիտելիքները կրթության նոր ասպարեզներում մնայուն ձեռքբերումներով եւ համամարդկային ու ազգային արժեքների առավել ճանաչողությամբ»[21]։ Եւ այդ գործընթացի իրագործման ճանապարհին նա նաեւ մաղթում է. «Թող մեր հայրերի սուրբ հավատքի անմար ջահը հարաժամ լուսավորի ձեր կյանքի նոր ուղին եւ առաջնորդի դեպի արդարը, ճշմարիտը եւ բարին»[22]։

Գարեգին Բ. Կաթողիկոսը հայրական հոգատարությամբ եւ հայրապետական մաղթանքով շրջանավարտներին կոչ է անում հաստատուն քայլերով ընթանալ «դեպի արդարը, ճշմարիտն ու բարին»՝ իրականացնելով իրենց իղձերն եւ նպատակները. «Այսօր դուք շրջանավարտ եք կրթական առաջին հաստատության՝ դպրոցի, եւ կանգնած եք կյանքի մի նոր շրջանի նախաշեմին։— Այդ կապակցությամբ վկայում է Հայոց Կաթողիկոսը եւ մատնանշում։— Հաստատուն քայլերով եւ անսայթաք երթով ընթացեք ձեր կենաց շավիղներով, դպրոցում ամբարած ձեր գիտելիքները եւ հոգեւոր արժեքների ճանաչողությունն առավել զորացրեք ու կյանք դարձրեք՝ ի սեր ձեր հոգում խնամքով փայփայած բարի իղձերի

---

[21] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը շրջանավարտների օրհնության օրվա առիթով, «Էջմիածին», 2008, Ե., էջ 39։*

[22] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը շրջանավարտների օրվա առիթով, «Էջմիածին», 2005, Ե., էջ 36։ Վեհափառը շրջանավարտներին նաեւ վստահեցնում է. «Մեր հայրերի սուրբ հավատքով ոտք դրեք ձեր կյանքի նոր ճանապարհին եւ այն կլուսավորի ձեր ուղին, ու ձեր քայլերը կլինեն հաստատուն ու անխոտոր», Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը շրջանավարտների օրհնության օրվա առիթով, «Էջմիածին», 2003, Ե., էջ 42։*

ու երազների իրականացման»[23]։ Եւ հանուն հայրենիքի եւ սփյուռքահայ մեր ժողովրդի խաղաղ ու երջանիկ ապագայի՝ Հայոց Հայրապետը շրջանավարտներին ի ցույց է դնում, որ այդ գործընթացում ուրույն դեր է վերապահված հայրենի ավանդների ու քրիստոնեական մեր արժեքների պահպանությանը։ Ահա թե ինչու մեր հայրենիքին եւ Հայ Եկեղեցուն լավագույնս ծառայելու համար նա շրջանավարտներին ոչ միայն մաղթում է աննկուն ջանասիրություն եւ ստեղծագործական բավականություն, այլեւ կոչ է անում. «Այն ամենը, որ ուսանել եք դպրոցում, այն գիտելիքներն ու արժեքները, որ ամբարել եք ձեր նվիրյալ ուսուցիչների ջանքերով, դարձրեք գործեր։ Գործեր, որ կրեն ավյունով լեցուն, ազնիվ ու շիտակ ձեր հոգու, ձեր հավատարմության, ձեր սիրո կնիքը՝ բարի պտուղներ բերելով մեր վերանկախացյալ հայրենիքին, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն ու ժողովրդին»[24]։

Գարեգին Բ. Կաթողիկոսը համոզված պնդում է, որ շրջանավարտների համար կրթությունը կարող է լուսավոր եւ օրհնյալ պատվար լինել ողջ կյանքում, եթե նոր կյանքի սեմին կանգնած հայ երիտասարդներն իրենց նպատակներն իրագործելու եւ հայրենիքին անմնացորդ ծառայելու գործում զինվեն նաեւ հայոց հոգեւոր, ազգային ու մշակութային անանց արժեքներով։ Դա է այն ճանապարհը, սովորեցնում է նա, որն անխզելիորեն կապված է ազգային ինքնության պահպանության եւ վերարտադրության հետ։ Այդ հարցում նրա արժեքային մոտեցումների հիմքում ընկած է այն հավատամքը, որ «քրիստոնէական համամարդկային արժէքներով, ազատութեան, արդարութեան, խաղաղութեան ձգտումներով է հանդերձաւորուած հայ ինքնութիւնը, որով հակառակ մահաշունչ փորձութիւնների, դարերի մէջ արարել է միշտ, ի զօրու գտնուել հաղորդ լինելու եւ ներդրում բերելու մարդկային քաղաքակրթութեան առաջընթացին»[25]։ Հատկանշական է, որ Վեհափառն ազգային ինքնությանը հավատարիմ մնալու կարեւորագույն միջոց է համարում կրթության սերտ կապը դարերով սրբագործված ազգային ավանդության հետ։ Այդ համատեքստում նա նաեւ պնդում է, որ գիտելիքի, հավատի եւ ազգամ-

---

[23] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը շրջանավարտների օրվա առիթով, «Էջմիածին», 2005, Ե., էջ 36։*

[24] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը շրջանավարտների օրհնության օրվա առիթով, «Էջմիածին», 2003, Ե., էջ 42։*

[25] *Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետի Սրբատառ Կոնդակը Հայոց Մեծ Դարձի 1700-ամյա հոբելյանի առիթով, «Էջմիածին», 2001, Ա., էջ 8։*

շակութային ավանդության կապը կարող է հիմք հանդիսանալ երիտասարդ սերնդի մտավոր եւ բարոյական որակները զարգացնելու գործում։ Այդ ամենի ընդհանրացմամբ դիմելով շրջանավարտներին՝ Վեհափառը հորդորում է. «Սիրելի՛ շրջանավարտներ, հավատքով եւ աստվածսիրությամբ մուտք գործեք կյանքի նոր շեմից ներս, որպեսզի ձեր ուղին լուսավորյալ ու անխոտոր լինի, եւ որպեսզի ձեր գովարժան գործերով ու արժանավայել ընթացքով կարողանաք իրապես լինել արժանի զավակները մեր հայրենիքի եւ մեր Սուրբ Եկեղեցու»[26]։

Սիրասուն շրջանավարտներին Հայոց Կաթողիկոսը մաղթում է նաեւ, որ հետագա կյանքում եւս հոգու եւ մտքի միասնությամբ առաջնորդվեն «դեպի իմացություն, հայրենանվիրում եւ ազգասիրություն տանող լույս ճանապարհով», որպեսզի գիտելիքն ու իմացությունը, հոգեւոր եւ բարոյական արժեքները առանցքային եւ հիմնարար լինեն իրենց կյանքում։ Այդ հարցում Վեհափառի համոզումն այն է, որ մեր նախնիներից ավանդված բազմադարյան հոգեւոր ժառանգությունը ազգապահպան ու ազգաշեն «լուսաբեր գանձարան է», պատմական, մշակութային, իմացական ու հոգեւոր անանց արժեք։ Այդ հիման վրա նա ընդհանրացնելով պնդում է, որ «Մեր գանձերը կշարունակեն ապրել, կշարունակեն իրենց առաքելությունը, քանի դեռ մենք նրանց հնաբոյր, բազմախօս էջերում կփնտրենք մեր հոգին ու էությունը, մնալով նաեւ շարունակողները մեր նախնիների նուիրումի ու նախանձախնդրութեան, որով վանքերում՝ գրչութեան կենտրոններում գրքեր հաւաքեցին եւ ընդօրինակեցին ու մատենադարաններ կազմեցին»[27]։ Ահա թե ինչու հայրական հոգատարությամբ շրջանավարտներին նա հորդորում է անսակարկ սեր ունենալ ազգային այդ «լուսաբեր գանձարանի» հանդեպ եւ այդ հիման վրա մաղթում է. «Սիրելինե՛ր, Մեր հանապազ հայցն ու աղոթքն է, որ Աստված

---

[26] *Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը շրջանավարտների օրվա առիթով, «Էջմիածին», 2004, Ե., էջ 67։ Մեկ այլ առիթով Գարեգին Բ. Կաթողիկոսը շրջանավարտներին բարեմաղթում է. «Հաստատուն քայլերով եւ անսայթաք երթով ընթացեք ձեր կյանքի շավիղներով, դպրոցում ամբարած ձեր գիտելիքները եւ հոգեւոր արժեքների ճանաչողությունն առավել զորացրեք ու արժանավոր գործեր դարձրեք ի սեր ձեր հոգում խնամքով փայփայած բարի իղձերի ու երազների իրականացման, ի սեր մեր հայրենիքի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու», Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը շրջանավարտների օրհնության օրվա առիթով, «Էջմիածին», 2007, Ե., էջ 9։*

[27] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի կոնդակը «Մատենադարանի բարեկամներ» հիմնադրամի հիմնման առիթով, «Էջմիածին», 2004, Թ.–Ժ., էջ 10։*

օրհնի ձեզ եւ ամենազոր Իր Աջը պահապան ու զորավիգ դարձնի ամենքիդ. որպեսզի զարդարյալ Իր երկնապարգեւ շնորհներով՝ աստվածահաճո ընթացքով, ազնիվ ու առաքինի գործերով կարողանաք շենացնել մեր հայրենիքը, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ ուրախություն պարգեւեք մեր ժողովրդին»[28]*։*

Նա նաեւ հավաստում է, որ ազգանպաստ եւ եկեղեցասեր միասնական այդ ճանապարհն արգասավոր է ոչ միայն յուրաքանչյուրի, այլեւ մեր ողջ ժողովրդի համար։ Եւ վստահություն է հայտնում, որ հանուն հայրենիքի շենացման ու բարգավաճման՝ շրջանավարտներն իրենց ապագա ձեռքբերումները կարժեւորեն աստվածպաշտությամբ եւ առաքինի վարքով։ Այդ նպատակով նա հայրական սիրով շնորհավորում եւ ողջունում է շրջանավարտներին, նրանց երջանկություն եւ հաջողություններ է մաղթում «մեր ժողովրդին, մեր Սուրբ Եկեղեցուն եւ ազատ իր կյանքը կերտող մեր հայրենիքին բարի ծառայության մեջ»։ Եւ շրջանավարտներին բերելով հայրապետական իր օրհնությունը՝ աղոթում է եւ մաղթում. Աստված «....հանապազ առաջնորդի եւ շնորհազարդի ձեզ եւ դեպի բարի իրագործում առաջնորդի ազնիվ ու շիտակ ձեր հոգու ձգտումները, հույսերն ու նպատակները։ Միշտ եւ ամենուր անբաժան ուղեկից ունեցեք Աստվածսիրությունը, եկեղեցասիրությունն ու հայրենասիրությունը, որոնք կօգնեն ձեզ ճշմարիտն ու արդարն ընտրելու, ձեր կյանքը առատ արդյունքներով արգասավորելու։ ....Թող ձեր ձեռքբերումներով, ձեր գործերով զորանան մեր ժողովրդի հույսերը, եւ պայծառանա մեր ապագան»[29]*։*

Ազգային դպրոցի շրջանավարտներին համարելով «ազատության մեր արեգակի հորդառատ լույսի ոսկեղեն հունձք»՝ Գարեգին Բ. Կաթողիկոսը մաղթում է, որ նրանք «հայության նվիրական իղձերի կենսավորումով պտղավորեն ազգային կյանքը», նախանձախնդիր լինեն

---

[28] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը շրջանավարտների օրվա առիթով, «Էջմիածին», 2005, Ե., էջ 36։*

[29] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը շրջանավարտների օրհնության օրվա առիթով, «Էջմիածին», 2010, Ե., էջ 3։ Վեհափառը նաեւ շրջանավարտներին բարեմաղթում է. «Թող Բարձրյալն Աստված շնորհազարդի ձեզ եւ առաջնորդի նորափթիթ կյանքի ձեր ճանապարհը՝ Իր հանապազ օրհնությամբ Մայր հայրենիքի խաղաղ երկնքի ներքո պարգեւելով Ձեզ բարիք, երջանկության, ազնիվ ու բարի նպատակների իրականացում եւ ամենայն հաջողություններ», Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը շրջանավարտներին, «Էջմիածին», 2000, Ե., էջ 42։*

«երկնաշնորհ ու աստվածապարգեւ հայրենիքի շենացմանը»։ Նա հավաստում է, որ հանուն այդ նպատակների իրագործման, հանուն շրջանավարտների բեղուն ու արգասավոր հայրենանվեր ու եկեղեցասեր արդյունաշատ գործունեության՝ աղոթում է առ Աստված, որ Նա հանապազ առաջնորդի եւ շնորհազարդի շրջանավարտ երիտասարդներին եւ նրանց ցանկանում է «երջանկություն եւ հաջողություններ՝ մեր ժողովրդին, մեր Սուրբ Եկեղեցուն եւ ազատ իր կյանքը կերտող մեր հայրենիքին բարի ծառայության մեջ»։ Վեհափառ Հայրապետը շրջանավարտներին մաղթում է նաեւ. «Թող ձեր ձեռքբերումներով, ձեր գործերով զորանան մեր ժողովրդի հույսերը, եւ պայծառանա մեր ապագան։ Եւ թող ամենախնամ Աստծու օրհնաբեր Աջը մշտապես հովանի լինի ձեզ»[30]։

Հայոց Նվիրապետը, իր հայրական օրհնությունը փոխանցելով շրջանավարտներին, մեկ անգամ եւս նրանց հիշեցնում է գիտելիքներն ու իմացությունը հոգեւոր-բարոյական արժեքներով հարստացնելու անհրաժեշտության մասին, քանի որ այդ համադրությունը համարում է հայրենասեր եւ քրիստոնյա լինելու նախապայման։ *Այդ պատճառով երիտասարդ հայորդիներին նա հիշեցնում է, որ դարեր շարունակ հավատն ու կրթությունը հայոց համար հանդես են եկել սերտաճած կերպով եւ վկայում է, որ պատմության ընթացքում նաեւ այդ միության շնորհիվ են կերտվել հաղթանակները, արձանագրվել ձեռքբերումներն ամենատարբեր ոլորտներում։ Նա համոզված է, որ կրթության եւ հավատի խելամիտ համադրության շնորհիվ կարելի է դիմադարձ կանգնել նաեւ ազգային արժեհամակարգը խաթարող ժամանակակից մարտահրավերներին։ Այդ կապակցությամբ վկայակոչելով Հայաստանում կրթության եւ բարոյական արժեքներով դաստիարակության պատմական փորձը՝ նա արձանագրում է, որ այդ անքակ միության շնորհիվ «գիտելիքն ու ուսումը միշտ էլ առաջնահերթություն են եղել մեր Եկեղեցու առաքելության ծիրում։ Սահակմեսրոպյան դպրոցը ժամանակին համահունչ կրթություն ապահովելու իր դարավոր ավանդներով դարձել է գրավականը մեր ազգային-քրիստոնեական ինքնության եւ մեր ժողովրդի գոյատեւման ու հարատեւության։ Այսօր նույնպես մեր Եկեղեցին իր պարտքն է նկատում հայրենի պետությանն աջակցել՝ կրթելու մեր ժողովրդի ար-*

---

[30] *Տե՛ս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը շրջանավարտների օրհնության օրվա առիթով, «Էջմիածին», 2010, Ե., էջ 3։*

ժանավոր զավակներ եւ մեր երկրի գիտակից քաղաքացիներ, զարգացած, նպատակասլաց եւ պատասխանատվության բարձր զգացումով սերունդ, որը պատրաստ կլինի դիմագրավելու ժամանակի մարտահրավերներին, տեր լինելու մեր երկրի ու ժողովրդի ապագային»[31]։

Դիմելով շրջանավարտներին՝ Վեհափառը նկատում է, որ նրանք կրթօջախներում ձեռք բերած գիտելիքներով, հույսերով ու երազանքներով են քայլում դեպի կյանքի նոր հանգրվան։ Եւ մաղթում է, որ մշտական հոգածությամբ Աստված պահապան եւ օգնական լինի նրանց կյանքի նոր ճանապարհին՝ սրտերում վառ պահելով հավատքը, աստվածսիրությունն ու ազգանվիրումը։ Նա նաեւ մաղթում է, որ կյանքի նոր ճանապարհին կրթության, գիտելիքի եւ հավատի նկատմամբ շրջանավարտների ջանքերը Աստծու զորակցությամբ պտղաբերեն հաջողություններով ու նորանոր ձեռքբերումներով, ինչը, վերջին հաշվով, բարիք եւ խնդություն կպարգեւի նաեւ հայրենիքին ու ժողովրդին։ Եւ այդ ճանապարհի կարեւորությունը փաստելով մեր ժողովրդի պատմական անցյալով՝ հավաստում է. «Մեր պատմության հերոսական օրինաչափություններից է, որ հաճախ, անգամ օրհասական պայմաններում, հայ միտքը ծնունդ է տալիս հիասքանչ ստեղծագործությունների եւ արարումների, որոնք փրկարար զորությամբ հաղթական ուժ եւ ոգի են ներշնչում աստվածասեր մեր ժողովրդին։ Այսպես նաեւ 16 դարեր առաջ շնորհազարդյալ Մեսրոպ Վարդապետի պայծառ ու հանճարագործ գյուտը աստվածային գիտության աղբյուրը բխեցրեց հայ ժողովրդի համար, եւ հայոց պատմության ոսկեդարը մտքի ու հոգու զարթոնքով սնեց եւ կրթեց քրիստոսասեր մեր ազգը Աստվածաշնչի իմաստությամբ։ Մեր պատմության հետագա բոլոր դարերին հայի միտքն ու հոգին զորացել են սահակմեսրոպյան մշակույթի ավանդներով, եւ հարատեւել է ժողովուրդը հայոց՝ սիրեցյալ Սուրբ Թարգմանչաց նվաճումներին նոր իրագործումներ հավելելով»[32]։

Շրջանավարտների հիմնահարցը քննարկելով արդիական հիմնախնդիրների հոլովույթում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այն գնահատում է

---

[31] Մայր Աթոռ Ս.Էջմիածնում կատարվեց կրթության մշակների օրհնության կարգ, «Քրիստոնյա Հայաստան», 2020, սեպտեմբեր Ա., թիվ 17 (565), էջ 3։

[32] Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ողջույնի խոսքը ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայում տեղի ունեցած Հայոց գրերի գյուտի 1600-ամյակին նվիրված միջազգային զիտաժողովի մասնակիցներին, «Էջմիածին», 2005, Թ., էջ 15։

լայն տեսանկյունից՝ տեսական հիմնադրույթների եւ հոգեւոր-բարոյական գործոնների համադրական մեկնաբանության դիրքերից։ Նա ապագայի կողմնորոշման հարցում գործնական մեծ կարեւորություն է վերագրում շրջանավարտ ապագա քաղաքացիների ինքնության պահպանության հարցին եւ վերջինիս լուծման հիմքերից է համարում գիտելիքների եւ հոգեւորի՝ գործնականում ներդաշնակ համագործակցությունը։ Այդ կապակցությամբ նա մեկ անգամ եւս վկայում է այդ գործում Եկեղեցու հանձնառությունը՝ վստահեցնելով, որ «....քրիստոսավանդ սպասավորության հետ մեր Եկեղեցու առաքելությունն է ազգային ինքնության պահպանումը։ Այս ծիրից ներս մեր Եկեղեցու առանձնակի խնամքը պիտի շարունակվի նոր սերնդի կրթության գործում, որ սահակմեսրոպյան դպրոցը հավատքի, մայրենի լեզվի ու հայրենյաց ավանդներով հար ապրի մեր ժողովրդի կյանքում»[33]։ Ապագա զարգացումների համապատկերում անդրադառնալով կյանքի նոր ուղու սեմին կանգնած շրջանավարտների իղձերին ու երազանքներին՝ Վեհափառը նրանց «երջանկություն եւ հաջողություններ է մաղթում՝ հայ ժողովրդին, Հայ Եկեղեցուն եւ ազատ իր կյանքը կերտող մեր հայրենիքին բարի ծառայության մեջ»։ Նա հորդորում է, որ ապագա գործունեության ոլորտում հայ երիտասարդ սերունդը իր «ձեռքբերումներով ու գործերով զորացնի մեր ժողովրդի հույսերը, որպեսզի էլ ավելի պայծառ ու լուսավոր լինի հայոց պետականության եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդի ապագան»։ Այդ կապակցությամբ երիտասարդությանը դիմելով՝ Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսը հորդորում է. «Այս ամենի մեջ, սիրելինե՛ր, դուք պիտի անդրադառնաք ձեր կոչմանն ու առաքելությանը, ձեր դերակատարությանը։ Երիտասարդներդ ներուժն եք ազգի, հզոր ու շարժիչ ուժը, եւ դուք պետք է այդ վստահությամբ հրաշագործեք մեր հայրենական, ազգային-եկեղեցական կյանքում»[34]։

Վեհափառ Հայրապետն առանձնահատուկ ուշադրությամբ է անդրադառնում նաեւ այն փաստին, որ համաշխարհայնացման արդի պայմաններում ավելի ու ավելի է կարեւորվում ազգային մանկավարժության

---

[33] *Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Եկեղեցական ներկայացուցչական ժողովին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, հունիս, 2017 թ.), «Էջմիածին», 2017, Զ., էջ 8։*

[34] *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մեկնարկեց ՀԵՀԵՄ համահայկական երիտասարդական հավաքը, «Քրիստոնյա Հայաստան», 2018, հուլիս Ա., թիվ 13 (513), էջ 4։*

դարավոր փորձը։ Եւ երբ նա «սիրասուն գավակներին»՝ երիտասարդ հայորդիներին մղում է «քայլելու գիտելիքի եւ իմաստության ամբարման ճանապարհով, զորացնելու ազգային ու հոգեւոր նկարագիր, դպրության եւ մշակույթի նկատմամբ սերն ու ճանաչողությունը»[35], ապա եւս մեկ անգամ հիշեցնում է, որ ազգային մանկավարժության դարավոր փորձի արդյունավետ օգտագործումը չափազանց մեծ դերակատարություն ունի պատմական փորձություն անցած եւ բյուրեղացած ազգային արժեքների վերարտադրության, ինչպես նաեւ՝ ներկա պահանջներին համահունչ նշանակալի արժեքների ձեւավորման գործում։ Եւ քանի որ այդ հոլովույթում անուրանալի է ազգային աշխարհընկալման հիմքում ընկած քրիստոնեական արժեհամակարգի դերը, Գարեգին Բ. Կաթողիկոսը, շրջանավարտների ուշադրությանը ներկայացնելով կրթության ոլորտում հայոց ազգային դպրոցի հսկայական ներուժը, մատնանշում է, որ այն նույնքան արդյունավետ կարող է գործառնել նաեւ մեր օրերում։ Այդ փաստն է վկայում Հայոց Կաթողիկոսի այն հավաստումը, թե՝ «Ուսումնատենչ ու ոգեպաշտ մեր ժողովուրդը բազմափորձ իր պատմության ողջ ընթացքում հոգեւորով իմաստ է հաղորդել իր կյանքին, կարեւորել գիտությունն ու արվեստը եւ միտք ու հոգի կերտող, ջանասիրությամբ ու երջանկությամբ լեցուն ուղին՝ ուսումն ու կրթությունը։ «Ճանաչել զիմաստութիւն եւ զխրատ, իմանալ զբանս հանճարոյ» հայերեն առաջին գրավոր նախադասության ուղենիշ խորհրդով հայոց սահակմեսրոպյան դպրոցը առաջնորդել ու պիտի առաջնորդի հայորդիներին՝ ոգեշնչելով ու զորացնելով աստվածաշնչյան անանց ճշմարտությամբ»[36]։

Համակարգված քննական մոտեցմամբ Հայոց Նվիրապետը հիմնավորում է նաեւ, որ Հայաստանում բազմադարյա պատմություն ունեցող կրթական համակարգն անփոփոխ կերպով հանդես է եկել ոչ միայն որպես մեր ազգային ինքնության ձեւավորման, այլեւ ազգային ինքնության պահպանության եւ վերարտադրության կարեւորագույն գործոն։ Այդ հիման վրա նա համակողմանի հիմնավորում է, որ ազգային կրթության դարավոր փորձի պահպանումը, մերօրյա կրթական համակարգում ներդրումն ու հետագա զարգացումը էապես կարող են նպաստել հայ-

---

[35] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը կրթության մշակների օրհնության օրվա առիթով (31 օգոստոսի, 2014 թ.), «Էջմիածին», 2014, Ը., էջ 5։*

[36] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը դպրոցականներին՝ նոր ուսումնական տարվա առիթով, «Էջմիածին», 2000, Թ., էջ 43։*

կական դպրոցը մրցունակ եւ առաջատար զարգացող ոլորտ դարձնելու գործընթացին, ինչը, միաժամանակ, ազգային դպրոցը կարող է մրցունակ դարձնել նաեւ միջազգային ասպարեզում։ Եւ այդ գործընթացում Գարեգին Բ. Կաթողիկոսը, մեկ անգամ եւս մատնանշելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի դերը, փաստում է, որ մեր նվիրական հոգեւոր կենտրոնից «միշտ ուսման եւ կրթության լույսն է տարածվել, հատկապես հայ դպրությունն է սկզբնավորվել մեր ժողովրդի կյանքում»[37]։

Փաստերը վկայում են այն մասին, որ Հայոց Կաթողիկոսը կրթության համակարգն արժեւորում է նաեւ գիտելիքներ եւ հմտություններ զարգացնելու տեսակետից։ Այդ հոլովույթում նա կրթությունը որակում է որպես ապագայի արհեստավարժ մասնագետներ պատրաստելու, նրանց որակական եւ գործնական ունակությունները ձեւավորելու ու զարգացնելու դարբնոց։ Այդ հիման վրա ինչպես աշխարհայացքային, այնպես էլ ազգային ու հոգեբանական եւ աշխարհաքաղաքական տեսանկյուններից կրթական համակարգի զարգացման գործում Վեհափառը մեկ անգամ եւս կարեւորում է պատմական փորձի դերը եւ համակարգված վերլուծությամբ անդրադառնում նաեւ այն փաստի գնահատմանը, որ «մեր ժողովուրդը դարերով ապրել է գիտելիքի ու դպրության հանդեպ սերը հոգում, պահպանել է այն հակառակ ամեն փորձության եւ ավանդել է մեզ իբրեւ թանկ ժառանգություն»[38]։

Գարեգին Բ. Կաթողիկոսը նաեւ պարզաբանում է, որ ազգի միասնության եւ համերաշխության գիտակցումը նույնպես պայմանավորված է կրթահենք ազգային ինքնությամբ։ Այդ դիտանկյունից ազգային ինքնությունը պայմանավորող այլ գործոններին զուգընթաց անդրադառնալով կրթության դերի լուսաբանությանը՝ Հայոց Նվիրապետն ընդհանրացված կերպով պնդում է, որ «մեր ժողովրդի առաջադեմ ներկայի եւ լուսավոր գալիքի կերտումը առաքելություն է, որի իրագործման համար առաջնային դեր եւ նշանակություն ունի կրթությունը»։ Եւ կոչ անելով, որ մեր ազգային իղձերի ու երազների իրականացմանը հետամուտ «նախանձախնդիր ոգով պետք է շարունակենք մշտապես նորովի արդյունավո-

---

[37] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի խոսքը Հայ Եկեղեցու «Լավագույն ուսուցիչ» մրցանակաբաշխության առիթով (10 նոյեմբերի, 2015 թ., Մայր Աթոռ Ս.Էջմիածին), «Էջմիածին», 2015, ԺԱ., էջ 7։*

[38] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը նոր ուսումնական տարվա առիթով, «Էջմիածին», 2003, Թ., էջ 15։*

րել կրթության ոլորտում ներդրվող բոլոր ջանքերը», Հայոց Հայրապետը միաժամանակ շեշտում է նաեւ, որ «ժամանակակից կրթությունը ....չի ենթադրում դարավոր մեր ազգային ժառանգության ստվերում ու խեղաթյուրում, քանզի արդիականի եւ ավանդականի արժեքների կրողը լինելով է, որ Մեր զավակները կարող պիտի լինեն պահպանել ազգային դիմագիծը, սահակմեսրոպյան ոգով մեր հայրերի կերտած դարավոր դպրության լավագույն ձեռքբերումներով ունենան առաջընթացի ամուր հիմք»[39]։ Նա նաեւ հավելում է, որ հոգու եւ մտքի անքակ միությունն է դեպի իմացության լույս առաջնորդող ճանապարհը, որի ակունքներում մեզանում կանգնած է եղել Հայ Եկեղեցին, որը «նաեւ մեր ազգային ամբողջականության հոգեւոր մարմնացումն է, հոգեւոր մեր հայրենիքը, մեկ ու միասնական աշխարհասփյուռ մեր ժողովրդի կյանքում»[40]։

Արձանագրելով, որ կրթությունը «լեցուն է կյանքի առաջընթացի հույսով»՝ Հայոց Հայրապետը դա բացատրում է նրանով, որ այն կոչված է «ուսուցանելու եւ կրթելու մեր զավակներին, որոնց պիտի վստահվի մեր ժողովրդի, մեր երկրի ու հայրենիքի վաղվա օրը»[41]։ Նա նաեւ վկայում է, որ այդ գործընթացում ուրույն դերակատարություն է վերապահված ինչպես ազգային մանկավարժության հարուստ պատմական փորձին, այնպես էլ ազգակրոնական ավանդույթներին։ Եւ այդ հիման վրա պնդում է նաեւ, որ մերօրյա կրթական համակարգում տեսական եւ բարոյական ոլորտների արդյունավետ զուգակցումը կարող է հսկայական գործառնական ներուժ դառնալ։ Այդ դիտանկյունից նա մատնանշում է. «Մեր երկրի զարգացումը, մեր երազած հայրենիքի կառուցումը հնարավոր է միայն ուսյալ, կրթված սերունդների շնորհիվ, որոնք առ Աստված ապավինությամբ պիտի շարունակեն մեր ժողովրդի կյանքը հարստացնել ու բարեզարդել՝ իրենց հոգու ու մտքի արարումներով, իրենց ստեղծած գի-

---

[39] *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարվեց կրթության մշակների օրհնության կարգ, «Քրիստոնյա Հայաստան», 2018, սեպտեմբեր Ա., թիվ 17 (517), էջ 3։ Գարեգին Բ. Կաթողիկոսն այդ դիրքերից հուշակում է նաեւ. «Նախանձախնդիր ոգով պետք է շարունակենք մշտապես նորովի արդյունավորել կրթության ոլորտում ներդրվող բոլոր ջանքերը, որ մեր երիտասարդները իրենց իմացության պաշարով մրցունակ լինեն ողջ աշխարհում եւ շենացնեն մեր կյանքը, զորացնեն մեր երկիրը, բարին ու բարիք ստեղծեն՝ հետապնդելով մեր ազգային իղձերի ու երազների իրականացումը», անդ։*

[40] ՎԱՐԴԱՆ ՍԱՐԿ. ԲԱՂՈՒՄՅԱՆ, *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի այցելությունը ԱՄՆ հայոց արեւմտյան թեմ, «Էջմիածին», 2005, Զ., էջ 10։*

[41] *Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Գիտելիքի օրվա առիթով, «Էջմիածին», 2008, Թ., էջ 40։*

տական, հոգեւոր ու մշակութային արժեքներով»[42]։ Նա լիահույս է, որ այդ ճանապարհով ընթանալով՝ իրական կարող է դառնալ վաղվա մեր օրը կերտել «բարօր ու երջանիկ, ծաղկուն՝ գիտությամբ ու մշակույթով, աստվածասեր հոգու հավատով ու կյանքով, մեր նախնյաց հավերժահայց ժառանգությամբ»[43]։

Քննարկվող համատեքստում Հայոց Նվիրապետը հավաստում է, որ դեռեւս պահանջվող կյանքի փորձ չունեցող սովորողների եւ ուսանողների ապագա կողմնորոշման համար գործնական մեծ նշանակություն ունի կրթական համակարգում քաղաքակրթական, աշխարհայացքային, ազգահոգեբանական եւ անգամ աշխարհաքաղաքական տեսանկյուններով պատմական հիշողության ներդրումը։ Այդ ըմբռնման դիրքերից դիմելով շրջանավարտներին՝ նա բարեմաղթում է. «Սիրելի՛ շրջանավարտներ, այսօր դուք ձեր կրթօջախներում ամբարած գիտելիքներով, հույսերով ու երազանքներով քայլում եք դեպի կյանքի նոր հանգրվան։ Դեպի ուր էլ առաջնորդի ձեզ այս նոր ճանապարհը՝ ուսումը շարունակելու, աշխատելու, բանակում ծառայելու, Աստված մշտական հոգածությամբ պահապան եւ օգնական է ձեզ՝ իրականություն դարձնելու ձեր ազնիվ ու արդար իղձերը։ Մեր Տեր Հիսուս Քրիստոս ասում է. «Ես սիրեցի ձեզ, Իմ սիրո մեջ հաստատո՛ւն մնացեք» (Հովհ. ԺԵ. 9)։ Մեր Տիրոջ այս կոչին ունկնդիր՝ ձեր սրտերում վառ պահեք հավատքը, աստվածսիրությունն ու ազգանվիրումը, որպեսզի Բարձրյալի զորակցությամբ ձեր ջանքերը պտղաբերեն հաջողություններով ու նորանոր ձեռքբերումներով եւ բարիք ու խնդություն հավելեն մեր հայրենիքի ու ժողովրդի կյանքին։ Աստվածակառույց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր աղոթքն ենք բարձրացնում առ ամենակարողն Աստված, որ օրհնի ձեր կյանքի ուղին եւ շնորհի երջանկություն ու ամենայն բարիք»[44]։

Քանի որ Հայոց Հայրապետի ընդհանրացված մոտեցումն այն է, որ դպրոցական ուսուցման գլխավոր նպատակը պետք է լինի աճող սերնդին գիտելիքներով, իմացությամբ եւ հոգով նախապատրաստելը երկ-

---

[42] Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ուղերձը Գիտելիքի, գրի եւ դպրության օրվա առիթով, «Քրիստոնյա Հայաստան», 2018, սեպտեմբեր Ա., թիվ 17 (517), էջ 1։

[43] Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Գիտելիքի օրվա առիթով, «Էջմիածին», 2008, Թ., էջ 40։

[44] Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը շրջանավարտների օրհնության օրվա առիթով, «Էջմիածին», 2012, Ե., էջ 7։

րի լիարժեք քաղաքացի դառնալու համար, այդ հիման վրա սովորող եւ ուսանող երիտասարդներին մաղթում է, որ նշյալ գործընթացում նրանց մշտապես հովանի լինի «ամենախնամ Աստծու օրհնաբեր Աջը»։ Եւ քանի որ, ինչպես վերը ցույց է տրվել, նրա համոզումն այն է, որ մերօրյա «կյանքի արագընթաց զարգացումներում ուսումն ու գիտելիքը կարեւոր են առավել քան երբեւէ», հայրական սիրով շրջանավարտներին մաղթում է, որ նրանք գիտելիքներով, իմացությամբ եւ հոգով հաստատուն ու նախաձեռնող ոգով ընթանան կյանքի ճանապարհով եւ մշտապես հավատարիմ մնան Մայր հայրենիքին եւ Մայր Եկեղեցուն։ Ամենայն Հայոց Կաթողիկոսն այդ բարեմաղթանքն առավել կարեւորում է այն առումով, որ «կյանքի նոր հանգրվանի սեմին կանգնած շրջանավարտների հետ են կապված իրենց ծնողների, մեր ժողովրդի եւ մեր հայրենիքի հույսերը»։ Ուստի շրջանավարտներին դիմելով՝ հորդորում է ապագայում իրենց քայլերը հաստատուն ու անխոտոր դարձնել, որ իրականացնեն իրենց հոգում խնամքով փայփայած բարի իղձերն ու երազները, ի սեր մեր հայրենիքի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու՝ յուրացրած գիտելիքները եւ հոգեւոր արժեքների ճանաչողությունն առավել զորացնեն եւ հիմք դարձնեն արժանավոր գործերի համար[45]։

Շարունակությունը՝ հաջորդիվ

[45] *Տե՛ս Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը շրջանավարտների օրհնության օրվա առիթով, «Էջմիածին», 2007, Ե., էջ 9։ Վեհափառը շրջանավարտներին մաղթում է. «....Աստված օրհնի ձեզ եւ ամենազոր Իր Աջը պահապան ու զորավիգ դարձնի ամենքիդ, որպեսզի զարդարյալ Իր երկնապարգեւ շնորհներով՝ աստվածահաճո ընթացքով, ազնիվ ու առաքինի գործերով կարողանաք շենացնել մեր հայրենիքը, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ ուրախություն պարգեւեք մեր ժողովրդին։ Թող մեր հայրերի սուրբ հավատքի անմար ջահը հարաժամ լուսավորի ձեր կյանքի նոր ուղին եւ առաջնորդի դեպի արդարը, ճշմարիտը եւ բարին», Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնության խոսքը շրջանավարտների օրվա առիթով, «Էջմիածին», 2005, Ե., էջ 36։*